ՀՀ կրթության, գիտության,մշակույթի և
սպորտի նախարարության
<< Վանաձորի Գրիբոյեդովի անվան N11 ավագ դպրոց>>
ՊՈԱԿ

Министерсрво образования ,
науки , культуры и спорта
Республики Армения
<<Ванадзорская старшая школа
N11 имени Грибоедова >>
ГНО

REPUBLIC OF ARMENIA

VANADZOR HIGH SCHOOL № 11
AFTER GREBOEDOV
OF MINISTRY OF EDUCATION SCIENCE CULTURE AND SPORT
NATIONAL NON-TRADING ORGANIZATION
NATIONAL NON-TRADING ORGANIZATION

2005Վանաձոր. Ազատամարտիկների պ.1. Vanadzor. Azatamartikneri 1. Ванадзор Азатамартикнери 1

հեռ. / tel / тел. (+374322) 2-09-37 ,2-21-30
E-Mail vanadzor11@schools.am

< 10 >_____04_____2023թ

Կազմված է
Պատասխանատու ստորաբաժանման կողմից

«Վանաձորի Գրիբոյեդովի անվան N11 ավագ դպրոց» ՊՈԱԿ

ՀՐԱՎԵՐ

«Վանաձորի Գրիբոյեդովի անվան N11 ավագ դպրոց>>ՊՈԱԿ-ի կարիքների համար **կահույքի վերանորոգման և պահպանման ծառայության** ձեռքբերման նպատակով

Վ11ԱԴ -ՄԱԾՄ-2023 /5 ծածկագրով

Հարգելի մասնակից, Նորայր Գարանյան ԱՁ տնօրեն Նորայր Գարանյանին

Հայտնում ենք,որ գնման ծառայության վերաբերյալ Ձեր գնի առաջարկը համաձայն տեխնիկական բնութագրի անհրաժեշտ է ներկայացնել *«Վանաձորի Գրիբոյեդովի անվան N11 ավագ դպրոց>>ՊՈԱԿ, ք.Վանաձոր,Ազատամարտիկների պ1 հասցեով*

Դիրեկտոր՝ տնօրեն

Ն.Ա.Սահակյան

Հավելված N 1
Վ11ԱԴ -ՄԱԾՄ-2023 /5 ծածկագրով
ընթացակարգի հրավերի

ԴԻՄՈՒՄ*

ընթացակարգին մասնակցելու

Նորայր Գարանյան ԱՁ -ն հայտնում է, որ ցանկություն ունի մասնակցել
մասնակցի անվանումը

<<Վանաձորի Գրիբոյեդովի անվան N11 ավագ դպրոց>>ՊՈԱԿ-ի կողմից « N , Վ11ԱԴ -ՄԱԾՄ-2023 /5
ծածկագրով հայտարարված
պատվիրատուի անվանումը

ընթացակարգի և հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ:

Նորայր Գարանյան ԱՁ -ն հայտնում և հավաստում է, որ հանդիսանում է
մասնակցի անվանումը

ՀՀ ռեզիդենտ:
երկրի անվանումը

Նորայր Գարանյան ԱՁ -ի հարկ վճարողի հաշվառման համարն է՝ 66805795 :
մասնակցի անվանումը
հարկի վճարողի հաշվառման համարը

Նորայր Գարանյան ԱՁ -ի էլեկտրոնային փոստի հասցեն է՝ _____ :
մասնակցի անվանումը
էլեկտրոնային փոստի հասցեն

Տնօրեն Նորայր Գարանյան

Մասնակցի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը)

ստորագրությունը)

Կ. S.

Հավելված 2

Վ11ԱԴ -ՄԱԾՄ-2023 /5 ծածկագրով

ընթացակարգի հրավերի

ԳՆԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿ

Ուսումնասիրելով Վ11ԱԴ -ՄԱԾՄ-2023 /5 ծածկագրով ընթացակարգի հրավերը, այդ թվում կնքվելիք պայմանագրի նախագիծը, Նորայր Գարանյան ԱՁ -ն առաջարկում է

մասնակցի անվանումը

պայմանագիրը կատարել ներքոհիշյալ ընդհանուր գներով.

ՀՀ դրամ

Չափա-բաժինների համարները	Ապրանքի անվանումը	Տեխնիկական նկարագիր	Արժեքը (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) /տառերով և թվերով/	քանակ	ԱԱՀ** /տառերով և թվերով/	Ընդհանուր գինը /տառերով և թվերով/
1	*2*		*3*		*4*	*5=3+4*
1	Սեղան -աթոռներ	Աշակերտական, հին ներկի մաքրում, նորով ներկում, լամինատի փոխում, զոդում	24000	14կոմպլ		336000 Երեք հարյուր երեսունվեց հազար դրամ
2	Վահանակներ	Վահանակների եզրերի թարմացում, կոտրված լամինատների փոխում	50000	3հատ		150000 հարյուր հիսուն հազար դրամ
3	Պատերի պաշտպանիչ լամինատ	230x15	7000	2հատ		14000 տասնչորս հազար դրամ

տնօրեն Նորայր Գարանյան

մասնակցի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը)

ստորագրությունը

Կ. Տ.

***եթե մասնակիցն ավելացված արժեքի հարկ վճարող է, ապա տվյալ պայմանագրի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարը նշվում է 4-րդ սյունակում:*

ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ

ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

Վ11ԱԴ -ՄԱԾՄ-2023 /5

ք. Վանաձոր <<12....>>...04.....2023թ.

<<Վանաձորի Գրիբոյեդովի անվան N11 ավագ դպրոց>>ՊՈԱԿ- ի դեմս տնօրեն Ն.Ա.Սահակյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Գնորդ), մի կողմից, և Նորայր Գարանյան ԱՁ -ն, ի դեմս տնօրեն Նորայր Գարանյանի (այսուհետև՝ Վաճառող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. **Պայմանագրի առարկան**

Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին հանձնել սույն պայմանագրի N 2 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված **կահույքի** նորոգման և պահպանման ծառայություն (այսուհետև՝ Ծառայություն), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ծառայությունը և վճարել դրա համար:

2. **Մատակարարման պայմանները**

2.1 Վաճառողն Ծառայություն է մատուցում Գնորդին:

2.2 Ծառայությունը մատուցվում է սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված գնման ժամանակացույցին համապատասխան :

3. **Կողմերի իրավունքները և պարտականությունները**

3.1 Գնորդն իրավունք ունի՝

3.1.1 Ծառայությունը Պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատուցելու դեպքում հրաժարվել Ծառայությունից.

3.1.2 Եթե մատուցվել է անպատշաճ որակի՝ սույն պայմանագրի 1 կետում նշված տեխնիկական բնութագրերին չհամապատասխանող Ծառայություն.

ա) Չընդունել և պահանջել Վաճառողից վճարելու սույն պայմանագրի 7.3 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 7.2 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ծառայության համար վճարված գումարը.

3.1.3 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարատավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով ձեռք է բերել Ծառայություն՝ սույն պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև Ծառայությունը այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը.

3.1.4 Միակողմանի լուծել սույն պայամանգիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է սույն պայամանագիրը.

3.1.4.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցվել է անպատշաճ որակի Ծառայություն, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը,

3.2 Գնորդը պարտավոր է՝

3.2.1 Կատարել սուն պայմանագրին համապատասխան մատուցված ծառայության ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

3.2.2 Վաճառողի Ծառայությունից սույն պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին.

3.2.3 Սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում իրականացնել վճարումները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 7.5 կետով նախատեսված տույժը:

3.2.4 Ծառայության որակի մասին սույն պայմանագրի պայմանները խախտելու դեպքում Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով Ծառայության բնույթից և նշանակությունից:

3.3 Վաճառողն իրավունք ունի՝

3.3.1 Գնորդից պահանջել ընդունելու սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատուցած Ծառայությունը.

3.3.2 Գնորդից պահանջել վճարելու Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատուցած Ծառայության համար իրեն վճարման ենթակա գումարները.

3.4 Վաճառողը պարտավոր է՝

3.4.1 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 7.2 և 7.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

3.4.2 Սույն Պայմանագրի 3.1.4 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս վնասները:

3.4.3 Սույն պայմանագրի կատարման (կանխավճարի) ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին գրավոր տեղեկացնել պատվիրատուին:

3.4.4 Պատշաճ ձևով կատարել սարքավորումների վերանորոգման աշխատանքները:

4.Ծառայության գինը և վճարման կարգը

4.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է մինչև------500000(հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ ներառյալ ԱԱՀ-ն: Յուրաքանչյուր ապրանքատեսակի միավորի գինը սահմանված է սույն Պայմանագրի N 1 հավելվածում: Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

4.2 Գնորդն իրեն մատակարարված Ծառայության դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման անրձանագրության հիման վրա

5.Ծառայության որակը և երաշխիքը

5.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ծառայության որակի համար:

6. Ծառայության հանձնումը և ընդունումը

6.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության (այսուհետ՝ արձանագրություն) ստորագրմամբ: Վաճառողը՝ Ծառայության հանձնման ավարտից 2 աշխատանքային օրվա ընթացքում Գնորդին է ներկայացնում հանձնած Ծառայության մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ (Հավելված N 3):

6.2 Արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցած Ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, արձանագրություն չի ստորագրվում և պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) վաճառողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

6.3 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից տասնօրյա ժամկետում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

7. Կողմերի պատասխանատվությունը

7.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում մատուցած Ծառայության որակի և Պայմանագրով նախատեսված՝ մատակարարման ժամկետների պահպանման համար:

7.2 Վաճառողի կողմից սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում գանձվում է տույժ 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով, որը հաշվարկվում է օրացուցային օրերով՝ պայմանագրի չկատարած մասի գնի նկատմամբ:

7.3 Սույն պայմանագրի 1 կետում նշված Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի ընդհանուր գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

7.4 Սույն պայմանագրի 7.2 և 7.3 կետերով նախատեսված տույժը տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարներից:

7.5 Գնորդի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05%-ի չափով:

7.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.7 Տույժերի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանգիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով նյուս կողմին:

9. Այլ պայմաններ

9.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում տվյալ գնումը իրականացնելու համար համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում, որի վերաբերյալ կողմերի միջև կկնքվի համապատասխան համաձայանգիր:

Եթե պայմանագրի կնքելու օրվան հաջորդող մեկ տարվա ընթացքում պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում ապա պայմանագիրը լուծվում է:

9.2 Այն դեպքերում, երբ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հսկողության և (կամ) վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ Վաճառողին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանգիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայամանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ կատարողը պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Գնորդի ստացածով:

9.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր պայմանագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող մասնակիորեն կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի.

Սույն պայմանագրում չի կարող կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքների ծավալների կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալը պայամանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել գնման պահանջը.

9.4 Սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող և (կամ) Գնորդ) օգուտները (խնայողությունները) և (կամ) կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են.

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները , դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է պատվիրատուի հետ պայմանագիր կնքած անձը:

9.5 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

9.6 Սույն պայմանագիրը կազմված է – էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի NN 1, 2 և 3 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

9.7 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված

համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

9.8Սույն պայմանագիրը գործում է մինչև 2023թ. դեկտեմբերի 25-ը:

9.9 Սույն Պայմանագրի նկատմամբ կիրառվում է ՀՀ իրավունքը:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ ԿԳՄՄՆ <<Վանաձորի Գրիբոյեդովի անվան N11	Նորայր Գարանյան ԱՁ
ավագ դպրոց>>ՊՈԱԿ	ՀՎՀՀ՝ 66805795
Ք.Վանաձոր,Ազատամարտիկների պ1	Հասցե՝ ք, Վանաձոր , Տ.Մեծի պ.41
ՀՎՀՀ 06909818	Ինեկոբանկ ՓԲԸ
Գանձապետարանային հաշիվ	Լոռի մ/ճ
900238000534	Հ/Հ՝ 2051432198921001
Տնօրեն՝ Ն.Ա.Սահակյան	
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ.